

Բ.

ԳՐԱԿԱՆ

ՄԱՐԻՏՏԱ ՇԱՀԻՆԵԱՆԻ ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

(Տպաւորութիւն)

Քաջերից շատ քչերին է վիճակուած ազատ լինել իրենց համար ժողովրդի մշակած բաւական ճիշտ ու սուր նկատողութիւն— վճռից, թէ «Քաջի անունը լսիր, իրեն մի տես» Այդ բախտաւոր քչերի թուից է և մեր իրականութեան մէջ դեռ մոլորակի նման երեցած հայազգի գրող—բանաստեղծուհի Մարիէտտա Շահինեանը։ Ռուս շրջանում ծնուած, դաստիարակուած, կրթուած, ռուս ժողովրդի լաւագոյն դաւակների ոգով սնուած մեր ազգակիցը, ինչպէս ինքն է ասում, հիւսիսում ստացած իւր իւրատեսակ հոգու վէրքի բուժման սպեղանին հայրենի հարաւի ջերմութեան մէջ է որոնում ու կարծես նրա յաւէտ որոնող ոգու համար հայրենի անպաճոյճ, աւեր օջախը իր իսկ ցանկալի հանգիստը, նոր ստեղծագործութիւնների առատ որոճման, ապրումի նիւթն է մատակարարում։

Լաւ մարդով և իւրատեսակ տաղանդաւոր գրողով ընդհանրապէս աղքատ, իսկ վերջերս արդէն գրեթէ խոպանացած հայ միջավայրում մեր նոր «քաջ»-ի երևալը անշուշտ հետաքրքրութիւն պէտք է առաջ բերէր, ոչ իբրև նորոյթ, այլ աւելի շատ ու շուտ իբրև յիշեալ երկու յատկութիւնները գեղարուեստորէն ներդաշնակած, բնական հարազատութեամբ ու ճշտութեամբ իր մէջ մերած անձնաւորութիւն։

Իմ նպատակը չէ այդ բազմօրինակ հետաքրքրութեան ուսանելի անձի գրական գործունէութեան գնահատութիւնը տալ. նախ այն պատճառով, որ ռուս առաջնակարգ քննադատները արդէն իսկ իրենց հրճուանքի արժանաւայել գնահատական խօսքն են ասել, երկրորդ, որ գրական երկերով Մարիէտտային գնահատելը նրա արժանիքի կիսատ գնահատումը, նրա տաղանդի կտրելի է ասել զժգոյն երևան հանելը կնշանակէր։

Հայ իրականութիւնը մեծ չափով նրան դեռ չի ճանաչում, որովհետև ռուս լեզուով, ռուս թերթերում գրող հայուհին միայն ռուս մամուլին հետևող հայ ընթերցողների շրջան ունի։ Նրա մեր

իրականութեան անկապտելի սեփականութիւնն դառնալը անհրաժեշտութիւն է և դրա համար մեր բանաստեղծներն հայրենի կտուրի տակ իր բոյնը հիւսելու, հայ օջախում ծուխ անելու օրերը չի խնայում, բայց և մեր կողմից անհրաժեշտ է ոչ խրախուսանք, ոչ աջակցութիւն. այդ ամենը նրա անդադրում աշխատող հոգում ինքնաբերաբար առաջ են գալիս ու կան, այլ միայն նրան հասկանալ ըմբռնել:

Ես կուզէի որ մենք նրան լաւ ճանաչենք և համոզուած եմ որ այդ ճանաչումը թէ անձնական, թէ հասարակական գնահատելի արժէք կստեղծէ: Մարիէտտայի իւրատեսակ տաղանդ լինելը իւր մէջ ունի շատ հազուադէպ պատահող հակադիր ոյժերի՝ անհատականի ու հասարակականի, բնականօրէն շողկապած, ձուլած, ինքնարուիս երևան գալու առաւելութիւնը և այդ է, որ մեր գրական իրականութեան մէջ հազուադէպ է ուստի և ուսանելի, խրատական:

Բարոյական ապրումները, բարոյական տառապանքի բարոյական ներքին կռուի, վարանման, սայթաքման ու կրկին բարձրացման աշխարհը յիրաւի մարդուն դարձնում է երգող, նկարող, գրող, խօսող, մի խօսքով իւր տառապանքը արուեստի այս կամ այն ձևով արտաբերող: Այսօրինակ խառնուածքն է ահա ամենից առաջ ընդհանրապէս արուեստի մէջ ուսանելին ու նորոյթ բերողը:

Մեր գրական աշխարհում նման խառնուածքի գրող շատ հազուադէպ է ու Մարիէտտան այդ հազուադէպութեան մէջ հազուադիւտ է:

Որ նա տաղանդ է, դեռ իւր ողջ խորութեամբ ու թափով երևան չեկած, այդ ես չէ, որ պիտի հաստատեմ ու գնահատեմ. որ նա մարդկային հոգու աշխարհի նրբին գաղանիքները իւր բազմարուեստական արտաբերումներով օժտուած մտքի ու սրտի բովից արուեստօրէն պիտի կերտէ, շնչաւորէ, դրա համար նրա դեռ երիտասարդ հասակի ու նոր բացուող տաղանդի գրաւականն ունենք:

Նա, այն անձնաւորութիւններից է, որոնց համար ոռուս գրողը (Բելինսկին) ասել է «Тягу не многого душа». Անշուշտ մարդու հոգին շատ է աստուածային, որ մարդկայնօն նրան հասկանալ կարելի լինէր, բայց կան և սքանչացման, ինքնամփոփման, վերացման մոմէնտներ և այդ այլակերպութեան տարօրինակ վայրկեանին կարելի է լինում աստուածային փառքի նշոյլ չկարդալ հողեղենի լուսաւորուած հոգում: Այդ այլակերպման վայրկեաններով հարուստ հոգու համար յիրաւի Մարիէտտայի նիւթական պատեան մարմինը տկար է: Մարդու ու աշխարհի

փոխյարարերութիւններից առաջ եկած անթիւ, անհամար, միշտ նոր ձևով, նոր երանգով մանր ու խոշոր առեղծուածները նրա խիստ զգայուն հոգու աշխարհում լուծումներ են պահանջում ու նրա հողեղէնը դեռ ի վիճակի չէ այդ առեղծուածի լուծման համար անհրաժեշտ լարումը ճիգը ունենալու և արտայայտութեան յարմար միջոցները գտնելու: Զգալ, ապրել, ըմբռնել, տարուել վսեմով, դառնալ համամարդկային ու չկարողանալ դեռ արտայայտել, ահա նրա արուեստաւոր մարգարէ դառնալու համար անհրաժեշտ միջավայր ողբերգականը պատրաստէ:

Մարիէտտան երկրայինը երկնայինի հետ հաղորդակցելու բնտիր միջոց անօթներից է, իսկ այդ կնշանակէ, թէ յաւիտենականը անցաւորում ամփոփելու, կատարեալը անկատարի մէջ կերպարանաւորելու գերմարդկային աշխատանքը կատարել: Գիտէ՞ք ինչ կնշանակէ անօթ ընտրութեան լինել, հրամայականի ձայնը հրապարակում ու իր հոգու աշխարհում հնչելու պարտաւորութիւնն ունենալ: Այդ կնշանակէ անդադար ճիգեր դործ դնել նոր ձևով, նոր բովանդակութեամբ հոգու պահանջը կատարել և միշտ էլ վրիպել: Ողբերգականն այն է, որ նման անձնաւորութիւնները գիտեն, որ իրենց բոլոր ճիգը ու ջանքը շատ է քիչ արտայայտելու այն, ինչ որ կայ իրենց մէջ, որ պատեհան—մարմինը անզօր է անդադար բռնկում—ժայթքում ունեցող հրաքուխ հոգու լափող, լիզող բացերը պարփակելու հոգու վառ արշալոյսերը զրոհւորելու:

Անվերջ եռ ու դեռ, անվերջ ալէկոծում, մերթ խուլ որոտում, մերթ շոնգալից պայթում, մերթ աստուածային խաղաղութիւն, մենթ արեւ ու անձրեւ հոգու աշխարհում. այս բազմօրինակ երևոյթները արտայայտելու համար մի ձև, մի եղանակ չկայ: Արուեստը շատ է բազմազան և նման հոգու համար արուեստի բոլոր տեսակներն են մանչելի, ըմբռնելի: Սրանով պիտի բացատրենք և Մարիէտտայի և բանաստեղծուհի և վիպասան և գրական քննադատ և փիլիսոփայօրէն վերլուծող և հասարակական դասախօսութեամբ հրապարակ եկող լինելը: Նրա հոգին շատ է արտաբերում, նիւթը շատ է առատ ու բազմօրինակ, որ մի ձևի տակ հրապարակ գայ: Ինականօրէն նրա համար այս ու այն ձևը առաջ է գալիս և նա արտայայտում է իւր ապրումը համապատասխան ձևով:

Անշուշտ դեռ իւր հոգու ապրումները և զբանց արտայայտութեան միջոցները չունին այդ կատարելութիւնը որոնք Մարիէտտային վերջի վերջոյ պիտի դարձնեն ոչ միայն մեր, այլ և ընդհանուր իրականութեան ուսանելի, մնայուն արժէքը: Եւ այդ նրա համար, որ նա դեռ նոր է բացւում, որ նրա ունակութիւնների աշխարհը կերպարանաւորման, կադապարուելու ճամբին են:

Էականն այն է որ նրա հոգու աշխարհը հազուադէպ է օժտուած, որ նրա մէջ արդէն նկատուում են այնքան դժուարին, այնքան ծանր աշխատանք պահանջող բանականութեան, զգացմունքի ու կամքի համերաշխութիւնը, որ նա ունի ինքն իրեն ընդլայնելու տիեզերքը ընդգրկելու, տիեզերք դառնալու և միաժամանակ տիեզերքը եզրաւորելու «ես» դարձնելու ընդունակութիւն։

Այս ունակութիւնն է, որա նրա մէջ բնականօրէն բարոյական—կրօնական լուսաւոր շրջանակում է դրուած։

Այնքան անմտօրէն, այնքան թեթեւօրէն կրօնի հարցը լուծող մեր հասարակութեան մէջ, երբ բազմակողմանի կրթուած, Եւրոպան շրջած, Եւրոպականը ապրած ու մարսած մէկին ես տեսնում, որ իւր օժտուած հոգին արուեստօրէն դաստիարակած—կրթած ձեր առաջ է հանում կրօնի փիլիսոփայութեան լաւագոյն արտայայտութեամբ, բնականօրէն ուշադրութիւն ես դարձնում ու դարմանք—մխիթարանք ստանում։

Մարիէտտայի կրօնականութիւնը հասկանալի է, երբ ինկատի ենք առնում նրա անսահմանը սահմանաւորելու և սահմանաւորը անսահման դարձնելու յաւիտենական, անլուծելի, պահանջով բռնուած հոգին։ Կրօնական—խորհրդաւորութիւնը (միստիկան) հասկանալիօրէն նրա համար գրաւիչ է։

Զէ որ մարդկային հոգու տկարութեան խիստ ողբերկական ինքնագիտակցութիւնը իւր հանգիստը միայն կրօնի այս գերբանականի մէջ է գտնում։ Իսկ եթէ այդ որոնող հոգին և գեղարուեստօրէն արտայայտելու կարիք—պահանջն ունի, ապա կրօնական խորհրդաւորութիւնը (միստիկան) կրօնի գեղարուեստական արտայայտութեան այդ յարմար ձևն է։

Բանաստեղծ—փիլիսոփայ Մարիէտտան կրօնական է ու միստիկ և այդ նրա հոգու ամբողջանալու համար անհրաժեշտ է։ Ահա ըստ իս Մարիէտտայի մարդի և բանաստեղծի գուգորդութեան հետաքրքրական կողմը։

Նա ամենից առաջ բարոյական արժէք է, ապա թէ այդ արժէքը գրական այս ու այն ձևով գեղարուեստօրէն արտայայտող—բանաստեղծ։

Նրա ողջ էութիւնը բռնուած է իւր բարոյական գիտակցութեամբ և որովհետեւ իւր գիտակցութիւնը աւելի ուժեղ է, թափով, քան իւր նիւթական կառուցուածքը կարող է տանել, ուստի և նա միշտ ճնշուած է զգում իրեն ընկճուած, որը համեստութեան ամենից գրաւիչ կերպւորանքն է ստանում. Նա անվերջ է համեստ, ոչ նրա համար, որ այդ առաքինութիւն է, և գուցէ շատերի համար գրաւիչ, այլ պարզապէս նրա համար, որ իւր հոգուն մարմինը չի յաղթահարում, իւր ունակութիւնը գրասեւորելու համար զգայարանները անզօր են։

Եւ անա մղկտալով, ջերմ կարեկցութեամբ, անվերջ զոհաբերելու պատրաստակամութեամբ մարդ նրա աչքերում կարդում է այդ անգորութիւնը, այդ տկարութիւնը. ու Մարիէտտան դառնում է յիրաւի ուսանելի բարոյական արժէք:

Նրա բարոյական տաղանդ հոգին դեռ իւր լրիւ զարգացումը չունի և երբ դիմացինը ըմբռնում է նրան ու հասկանում, որ իր առաջ հոգու պայծառակերպութիւններ ունեցող արտասովոր մարդ է կանգնած և այդ մասին իրեն է յատնում նա շփոթւում, ընկճւում է էլ աւելի: Եւ այս նրա համար ողբերգական է. մի բան, որ նրա լսելիքի դործարանի վրա ազդել է ու ծանրալուր է դարձել: Գուցէ ինքնամփոփման սուր պահանջը և դրսի ու իր ներսի խիստ հակադրութիւնը այս հոգու հետ և իր զգայարանները կերպարանաւորելու, իր ներքին պահանջին համապատասխան դարձնելու խնդրում առաջնակարգ դեր է կատարել:

Ուշադրաւ կողմերից մէկն էլ այն է, որ դեռ երիտասարդ հասակում նա կարողացել է ներդաշնակել իւր հոգու պահանջները արտայայտութեան ձևերի հետ:

Կրօնական վսեմ ըմբռնման արտայայտութիւնը նրա երկիւղած, մեղմ վերաբերմունքի մէջ կգտնէք. բարոյականը իւր պաշտամունքի, սրբութեան սրբոցի նրբին դրսեւորումը նրա բնականօրէն վարդապետողին վայել ուսուցանող ձայնում կլսէք: Խօսելիս նա վարդապետող է և նրա ձայնում պարփակուած է նրա հոգին, ուր գերագոյնը ըմբռնելի է դարձել Մարիէտտային և միւս կողմից շրջապատի խեղճութիւնն է պարզուել: Եւ տհա կարծես Մարիէտտան իւր ձայնի ելնէջով մեզ ասում է մեղմ, խրատող, աշխարհի իմաստութիւնը ըմբռնած ալեւոր նահապետի նման— Մարդը շատ է խեղճ, աշխարհը շատ աղքատ ու անկատար, կայ գերագոյնը, վսեմը. աշխատեցէք, ձգտեցէք անվերջ ու համոզուած եղէք, որ ձեզ ձեր դժուարին ճամբում մի ոյժ, մի ներքին անդրդուելի հաւատ կառաջնորդէ:

Այս նրա ձայնի ել և էջն է ասում. իսկ նրա աչքի արտայայտութիւնը— կարծես ձեզ ասում է— Ես դեռ խեղճ եմ ու տկար, ես զգում ու ըմբռնում եմ վսեմների վսեմը, գեղեցիկների գեղեցկագոյնը, բայց անգոր եմ կրելու և արտայայտելու: Եւ նրա հայեացքը դառնում է ազօթողի, որի մէջ կայ հիացմունք, վերացում, աստիճանաբար անէացում:

Եւ այս ամենը նրա բարոյական ըմբռնման, կրօնական վսեմ հասկացողութեան դեռ ազօտ, բայց բոցավառուելու ընդունակ, հոգու արտայայտութիւններն են:

Այս է իմ օպաւորութիւնը այդ իւրատեսակ աշխատաւորից, որի մէջ իմ կարծիքով ամենից զնահատելին, ուսանելին ու ար-

ժէքաւորը նրա գրչի արտադրութիւնները չեն, այլ այդ գրչին, այդ լեզուին այդ հայեացքին գործի դնող, շնչաւորող այս ու այն ձևով աշխատեցնող հոգին—նրա բարոյական—կրօնական ըմբռնումը:

Մարիէտտան ամենից առաջ ուսանելի է ու գնահատելի իւր հոգու բարոյական մեծութեամբ. նա գնահատելի կլինի, անգամ եթէ մի տող չգրի: Եւ իբրեւ անձնաւորութիւն—բարոյական արժէք նա դեռ նոր պիտի հրապարակ կայ, այսքանը գիտեմ, որ իմ այս երկտողը խիստ խորթ կհնչէ ոչ այնքան նրան անծանօթներին, այլ աւելի շատ նրան ծանօթներին ականջին. բայց ես խորապէս համոզուած եմ, որ տարիներ կանցնեն ու իրաւացին ես կլինիմ և ոչ իմ այս դիտողութիւններին հաւատ չընծայողները:

Դեռ շատ ասելիք ու գրելիք կայ Մարիէտտայի մասին, որովհետեւ բարոյական արժէքը ընդհանրապէս առատ է և բազմազան իւր բովանդակութեամբ: Ես ուզեցայ իմ երեքօրեայ անթիւ դիտողութիւններիցս միայն մի քանիսը գրի առնել, միայն և միայն նրա համար, որ տարիներ շարունակ այդօրինակ բարոյական—կրօնական արժէքի կրողի կարիքն է զգացուել մեզանում և այժմ ես հանդիպում եմ դրան՝ ոչ յանձին հոգևորականի ու տղամարդու, այլ աշխարհիկ կրթութեամբ բոլոր միջոցները սպառածի, աշխարհօրէն կրթուածի և այն էլ կնոջ:

Հակադրութիւնների սիրահար գրչի վարպետ, խօսքի արուեստաւոր Մարիէտտան հաւանօրէն հակադրութիւններ սիրում է, որովհետեւ ինքը մեր իրականութեան համեմատութեամբ հակադրութիւն է ու ինքն իր մէջ մի հակադրութիւն:

Հակադրութիւնը բաղխման նախադուռն է, բաղխումը ծնունդականութեան առիթը և Մարիէտտան այդ առիթների մի անսահման զուլալ աղբիւրն է: Ստեղծագործութիւնների, կառուցումների վարպետութիւնը կատարելագործելով հանդերձ նրա կառուցուածքի մէջ մենք կուզենայինք և իւր հոգու բարոյական արժէքի տաքութիւնը, կրօնական ըմբռնման լոյսը տեսնել:

Հայ ժողովրդի զարթօնքի ժամին Մարիէտտան շինարար աշխատանքի գնահատելի վարպետ արուեստաւորներից է լինելու: Ծանօթացէք և ուսումնասիրեցէք այդ արտակարգ հետաքրքիր անձնաւորութիւնը:

Գիւտ վ.